

338.14

ju - 11

1932



17 FEB 2010

631

4-63

650

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ  
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԽՈՅՆ ԶԵՎ ՈՍՅՈՂ ԿՈԼՏՆՏԵՍՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ—1932

338.14  
Դ-11

Միջին Գրադարան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ  
ԿՈՆՏՆԵՍՏԻԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀԱՅԿԻ ՌԱԳԻԶ ԿՈՆՏԵՆՏՆԵՐՈՒՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ



059

11.09.2013

Պետերատի տպարան  
Գլավիտ 7443  
Հրատ, № 2164  
Պատվեր № 1125  
Տպրած 7000



25495-60

ՔԱՐԳ. Մ. ԶԱԲԱՐՅԱՆ ԽՍԲ. ԱՐԵ. ՄԵՂՐՅԱՆ

ՍՐԲ. Ա. ԹԱՎԻՄԱՅԱՆ և Ե. ՀԱՐԱՐՅԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 1 ապրիլի 1932 թ. Սա. Ֆ. Ա.  
Ստորագրված է ապրիլի 10 ապրիլի 1932 թ.,

## ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման կարևորագույն ողակը պիտի դառնա բրիգադը: Կենտկոմը, գյուղատնտեսական լավագույն արտոնների փորձի համապատասխան, նպատակահարմար և զտնում կոլտնտեսություններում կազմակերպել բրիգադներ կոլտնտեսականների մշտական կազմով, վորպիդի այդ բրիգադներն, իբրև կանոն, գյուղատնտեսական բոլոր հիմնական աշխատանքները կատարեն վորոշ հողամասի վրա ամբողջ տարվա ընթացքում: Կոլտնտեսություններն այդ բրիգադներին նրանց աշխատանքի ժամանակ հատկացնում է անհրաժեշտ մեքենաներ, ինվենտար և աշխատող անասուն, վորոնց վիճակի համար ամբողջովին պատասխանատու յե բրիգադը:

Նման բրիգադների կազմակերպումը, սակայն անկարելի չպետք է դարձնի բրիգադներին հատկացնելու այնպիսի հողամասեր (նայած տեղի պայմաններին կոլտնտեսության ծավալին, նրա կազմակերպվածությունը) վորոնք պահանջում են վոր թե ամբողջ գյուղատնտեսական տեղում, այլ միայն գյուղատնտեսական աշխատանքի առանձին շրջան (վար, բերքահավաք): (ՀամԿ(Բ)Կ.ԿԿ 1932 թ. փետրվարի 4-ի վորոշումից):

1. Համաձայն սրա և ԽՍՀՄ Հողօրդկոմատի վորոշման՝ դարձանաացանի կամպանիայի նախապատրաստման վերաբերյալ, ԽՍՀՄ և ՊՍՖՍՀ կոլտնտեսությունների վարչությունը կոլտնտեսություններին առաջարկում է՝

ա) բոլոր կոլտնտեսությունների հիմնական ուղադրությունը աշխատանքի կազմակերպման մեջ ուղղել դեպի բրիգադների կազմակերպումը, ուժերի հիշտ բաշխումը բրիգադում, անհրաժեշտ կերպով կոլտնտեսականների ընտրությունը բրիգադում ըստ նրանց վորակի՝ քաշող ուժի, ինվենտարի, լծասարքի, տրանսպորտի ընտրությունը, բրիգադների համար արտադրական առաջադրություններ սահմանելը, գրանց կատարման ստուգումն ու վերահսկումը:

բ) վորոշակի հողամասեր հատկացնել բրիգադներին՝ ամբողջ գյուղատնտեսական տարվա ընթացքում մշակելու համար:

գ) կազմակերպել արտադրական բրիգադներ կոլտնտեսականներին մշտական կազմով՝ այդ բրիգադներին տրամադրելով անհրաժեշտ մեքենաներ, ինվենտար և աշխատող անասուններ:

2. Այն կոլտնտեսություններում, վորտեղ ըստ տեղական պայմանների (կոլտնտեսության ծավալը, նրա կազմակերպվածությունը) անհրաժեշտ համարվի՝ ստեղծել բրիգադներ գյուղատնտեսական աշխատանքների միայն առանձին շրջաններ համար (վար, բերքահավաք,):

ա) կազմակերպել բրիգադներ առաջիկա դարձանաացանի կամպանիայի համար կոլտնտեսականների վորոշակի կազմով, ցույց տալ այդ բրիգադներին հատկացվող հողամասերը՝ ամբողջ դարձանաացանի ընթացքում մշակելու համար:



բ) այդ բրիգադներին տալ զորանագրանի համար անհրաժեշտ մեքենաներ, աշխատող անասուններ, տրանսպորտ, լծասարք:

3. Թույլ տալ մշակութային համար բրիգադներին հատկացնելու այնպիսի հողամասեր, վորոնք ցրված են ցանքաչրջանառության բաղմամբիվ դաշտերում:

4. Կոլտնտեսության վարչությունը բոլոր մեքենաները, ինվենտարը, աշխատող անասունները, սերմացուն, տրանսպորտը, լծասարքը հանձնում է բրիգադներին առանձին ցուցակով, վորի մի տրինակը գտնվում է բրիգադի ձեռքին, իսկ մյուսը՝ պահվում է Կոլտնտեսության վարչության մոտ:

5. Բրիգադների ներսում Կոլտնտեսականներին ըստ խմբերի տեղադրումը, այդ խմբերին արտադրական առաջադրանքներ տալը, Կոլտնտեսականների միջև մեքենաների, ինվենտարի, անասունների, աշխատող անասուններին հարմարեցրած լծասարքի բաշխումը կատարում է բրիգադի: Բրիգադի ներսում աշխատող անասունների և ինվենտարի վիճակի համար անմիջական պարտականություն կրում են այն Կոլտնտեսականները, վորոնք աշխատում են նրանցով:

6. Կեր կրելու և պատրաստելու, ջուր կրելու աշխատող անասուններին գիշերը խնամելու և պահպանելու համար բրիգադներին ամեն մի 15—20 գլուխ անասունին տրվում է մեկ խոտապան—կերպան, վորը պատասխանատու չէ գիշերվա և ցերեկվա հանգստի ժամանակ անասուններին կանոնավոր պահպանելու և կերակրելու համար:

7. Յուրաքանչյուր բրիգադ աշխատանքները կատարելու համար պետք է ունենա վորտակի արտադրական առաջադրանք, վորի մեջ Կոլտնտեսության վարչությունը պարտավոր է նշել.

ա) կատարելիք աշխատանքի քանակը (ցանք, բերքահավաք, վորտակի տարածությունը քաղհան և այլն):

բ) աշխատանքի ամեն մեկ տեսակը սկսելու և վերջացնելու ժամկետը:

գ) ադրոտարտադրական պահանջները և վորակը ամեն մի կուլտուրայի և աշխատանքի տեսակի վերաբերմամբ (բերքի մոտավոր հաշիվը, անասնապահության միջերքի քանակը, վարի, քաղհանի, ջրելու վորակը):

դ) աշխատանքի ամեն մի տեսակի արտադրանքի նորմաներ:

ե) յուրաքանչյուր աշխատանքի գնահատումն աշխուրերով և իր ամբողջ արտադրական առաջադրանքի կատարման համար բրիգադին սահմանած աշխուրերի քանակը:

8. Կոլտնտեսականի աշխուրվա գնահատուրյունը պետք է բարձրաճա կամ կապիսի՝ նախած բրիգադի աշխատանքի հաջողության (համկ (բ) 4 44 վորոշումից):

9. ՈՍՀՄ և ՌՄՖՍՀ Կոլտնտեսությունի վարչությունը վճարականապես արգելում է բրիգադին հասնող աշխուրերը հավասարապես բաշխել բրիգադի Կոլտնտեսականների միջև, վորպիսի հանգամանքը ղրմադրկում է Կոլտնտեսականների աշխատանքը և հանդում կուլակային հավասարանքի:

## ԲՐԻԳԱԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կոլտնտեսական արտադրության կադմակերպման մեջ հսկայական նշանակություն ունի բրիգադի ղեկավար դերը: Բրիգադի հրմատությունից և կախված՝ Կոլտնտեսականների միջև աշխատանքի ճիշտ բաշխումը, քաղող ուժի, մեքենաների նպատակահարմար ոգտադրումը, ադրոտեսնիկական պահանջների կատարումը, վորոնցով պայքարում ենք բերքատվության բարձրացման համար և այլն:

Կոլտնտեսական վարչությունների ամենադիսավոր պարտականությունն է բրիգադիներին ընտրել լավագույն, առանձնապես հարվածային առավել հեղինակավոր Կոլտնտեսականներից, վորոնք գիտեն արտադրությունը, կարող են Կոլտնտեսականներին կադմակերպել արտադրական առաջադրանքի կատարման չուրը:

2. Կոլտնտեսությունի վարչությունը պարտավորեցնում է բոլոր Կոլտնտեսությունների վարչություններին վոչ ուշ, քան մեկ ամիս զաշտ դուրս դալուց առաջ՝

ա) կատարել բրիգադիներին ընտրությունը և նշանակումը:

բ) բրիգադիներին հետ կատարել հատուկ արտադրական խորհրդադակցություն և՛ ամեն մի բրիգադի համար առանձին, վորպեսզի բրիգադիները մանրամասն ծանոթանան իրենց արտադրական առաջադրանքներին:

գ) բրիգադիներին հանձնել դուրադատնտեսական աշխատանքների ամբողջ չրջանի համար արտադրական պլան—նարյադ, արտադրանքի սահմանված նորմաները, աշխատանքի գնահատումն աշխուրերով: Բրիգադի Կոլտնտեսականների համար բրիգադիին հանձնել աշխատանքային դրքույիններ, անվանացուցակ Կոլտնտեսականների աշխատանքի հաշվառման համար, և յուրաքանչյուր կուլտուրայի մշակման ադրոտեսնիկական կանոններ, բրիգադիներին ծանոթացնել կոլտնտեսականի աշխատանքի հաշվառման կանոնների և կարգի հետ:

դ) ծանոթացնել բրիգադիներին մշակելու համար նրանց հատկացված հողամասերի հետ և ցուցակով հանձնել աշխատող անասունները, մեքենաները, լծասարքն ու տրանսպորտը:

3. Բրիգադիը դաշտ դուրս դալուց վոչ ուշ, քան 15 որ առաջ պետք է իր բրիգադի Կոլտնտեսականների հետ կատարի 3-ից վոչ պակաս արտադրական խորհրդակցություն, վորտեղ պետք է.

ա) քննարկել բրիգադի արտադրական առաջադրանքներն ամբողջությամբ:

բ) բաշխել պարտականությունները, աշխատող անասունները, ինվենտարը բրիգադի Կոլտնտեսականների միջև:

գ) Կոլտնտեսականների յուրաքանչյուր խմբին տալ դարնանացանիք արտադրական առաջադրանք:

4. Կոլտնտեսությունը պարտավորեցնում է բոլոր Կոլտնտեսությունների վարչություններին բրիգադիի յուրաքանչյուր նշանակում և փոփոխություն կատարել միայն Կոլտնտեսության վարչության վորոշմամբ:

5. Արտադրական առաջադրության կատարման ընթացքում կոլտնտեսությունների վարչությունները պարտավոր են բրիգադիներին

պարբերաբար հրավիրել արտադրական խորհրդակցություն, հա-  
ճանգներ տալ նրանց անտեսության առաջադրանքի բոլոր հարցերի  
վերաբերմամբ՝ նրանց համակողմանի գործնական ոգնություն ցույց  
տալով իրենց վրա դրված արտադրական առաջադրանքները կատարե-  
լու համար:

6. Բրիգադիւնների աշխատանքի վարձատրությունը սահմանե-  
րի դեպքի աշխատանքի վերջնական արդյունքների համապատասխան,  
վորի համար կոտնտեսության վարչությունը բրիգադիւնին սահ-  
մանում է վորոշակի թվով աշխուրեք արտադրական առաջադրու-  
թյուններ աշխատանքի ամբողջ տևողության ընթացքում կատարելու համար:  
Արտադրական առաջադրանքը հաջող կատարելու դեպքում բրիգադիւնի  
աշխատավարձը համապատասխան չափով բարձրանում է, իսկ չկա-  
տարելու դեպքում՝ իջնում:

### ԳՈՐԾԱՎԱՐՁ

1. Կոտնտեսությունն առաջարկում է բոլոր կոտնտեսություններին  
բրին գործավարձը կիրարկելիս մեկնակետ ընդունել այն անհրաժեշտու-  
թյունը, վոր «իրականում խորհրդների 6-րդ համադրմամբ» վորո-  
շումների կենսագործումը՝ գործավարձի խորացման, հաշվառումը  
բարելավելու և յուրաքանչյուր կոտնտեսականի աշխատանքը աշխու-  
րեքով գնահատելու մասին՝ նրա կատարած աշխատանքի քանակի և  
վորակի համապատասխան՝ մնում է, իբրև կարևորագույն խնդիր:

1932 թ. անհրաժեշտ է կոտնտեսության բոլոր աշխատանքները  
փոխադրել գործավարձի և գործավարձը կիրարկել այնպես, վոր բո-  
րելավի աշխատանքի վորակը, բարձրանա աշխատանքի արտադրու-  
թյանությունը և կոտնտեսական արտադրության ասպարեքանություն  
թյունը:

2. 1931 թ. պրակտիկան մի շարք կոտնտեսություններում ցույց  
տվեց, վոր գործավարձը ձևական ընդլծ է կրում, այնտեղ, վորտեղ  
չկան արտադրանքի ճիշտ նորմաներ, վորտեղ կոտնտեսական աշխա-  
տանքը հաշվի չի առնվում ըստ կատարված աշխատանքի քանակի և վո-  
րակի, վորտեղ աշխատանքի յուրաքանչյուր տեսակը չի գնահատվում  
աշխուրեքով:

3. Հետագայում գործավարձի կիրարկման ժամանակ ԽՍՀՄ և  
ՌՍՖՍՀ կոտնտեսությունն առաջարկում են դեկավարվել հետևյալով.

ա) հերկի, փոցխելու աշխատանքի աշխուրեքով գնահատումն ու  
աշխատանքի հաշվառումը պետք է կատարվի ըստ մշակված հեկտար-  
ների քանակի, անպայման հաշվի առնելով ադրոտեխնիկական առաջա-  
դրությունների կատարումը, աշխատանքի կատարման ժամկետը, վո-  
րի խորությունը, հերկումն ու փոցխումը՝ առանց բաց թողումների:

բ) ցանքի դեպքում աշխատանքի գնահատումն աշխուրեքով կատար-  
վում է ըստ հեկտարների, հաշվի առնելով ցանքի կատարման ժամկե-  
տը, սերմացվի նորման, ցանքի խորությունը, բացթողումների բո-  
ցակայությունը, միջնահերկ տեխնիկական կուլտուրաներ ցանքելու  
դեպքում՝ հաշվի առնելով միջաշարքերի սահմանված լայնությունը,  
շարքերի կանոնավոր ուղղությունը:

գ) սածիլներ տնկելու աշխատանքի գնահատումն աշխուրեքով կա-  
տարվում է մի հեկտարին տնկված և կպած սածիլների քանակով՝  
պահպանելով սահմանված միջաշարքերը, շարքերի կանոնավոր տեղա-  
դրքը և աշխատանքի կատարումը սահմանված ժամկետներին:

դ) քաղհանի դեպքում աշխատանքների գնահատումը կատարվում  
է հեկտարով՝ հաշվի առնելով քաղհանի կատարման ժամկետներն ու  
վորակը, մոխրաքերի լիակատար վորջնացումը, բույսերին չվնասելը:

յե) հացարույների կուլտուրաների բերքահավաքի (հնձի) ժամա-  
նակ աշխատանքի գնահատումն աշխուրեքով կատարվում է հեկտար-  
ներով՝ անպայման հաշվի առնելով աշխատանքների կատարման ժամ-  
կետները, հնձի մաքրությունը, հացահատիկը չտրորելը, հասկերը  
չաղ չտալը:

զ) ճակնդեղ, կարտոֆիլ փորելիս, բամբակ չանաքելիս, բանջա-  
րեղեն հավաքելիս, հացահատիկ ծեծելիս, կտավատը մշակելիս աշխու-  
րեքով գնահատումը կատարվում է մեկ հեկտարից հավաքած արդյուն-  
քի քանակով (ցենտներով):

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.—Իերքահավաքի սկզբին կոտնտեսու-  
թյան վարչությունը փորձնական յեղանակով հացահատիկը  
կայսելով, ճակնդեղը ստուգելի հողակտորից փորելով և այլն  
սահմանում է մեկ հեկտարի արտադրանքի չափը ցենտներով,  
վորտեղ ստուգելի առաջադրանքներ են հանդիսանում բերքի հա-  
վաքման և աշխատանքը գնահատելու համար:

4. Յեթե բերքի փորձնական կայսումով և բերքի ստուգելի յեղա-  
նակով սահմանված չափից բերքը պակաս ստացվեց՝ համապատասխան  
չափով պետք է իջեցվի բրիգադի կոտնտեսականների աշխուրվա գնա-  
հատությունը: Այլև ստացվելու դեպքում համապատասխան չափով  
բարձրացվում է:

5. Աշխատանքը (առանձնապես ցանքի, քաղհանի, բերքահավաքի)  
ժամանակին չկատարելու դեպքում, իբրև հաստատուն կանոն, սահ-  
մանել աշխուրերի գնահատության իջեցում և ժամկետից առաջ կատա-  
րելու համար՝ բարձրացում: Այս իջեցումների և բարձրացումների չա-  
փը սահմանում է կոտնտեսության վարչությունը:

6. Անասնապահության մեջ գործավարձը և աշխատանքի գնահա-  
տումն աշխուրեքով, իբրև կանոն, պետք է կիրառվեն ստացված ար-  
տադրանքի քանակի համապատասխան:

ա) կաթնատնտեսական ֆերմաներում աշխուրեքով գնահատումը  
կատարել կթված կաթի քանակի, աճեցված հորթերի քանակի նրանց  
դիրություն համար:

բ) մուսլին և հորթապահական ֆերմաներում՝ աճեցված մսացու-  
անասունների քանակի, մատղաջ անասունների խնամքի և նրանց դի-  
քություն համար:

գ) խողարուծական ֆերմաներում աճեցված խոճկորների քանակի  
ու վորակի և խողերի դիրություն համար:

դ) վոխարարուծական ֆերմաներում՝ աճեցված դառների քանա-  
կի, մսի յելույթի և ստացված բրդի համար:

յե) թռչնարուծության մեջ՝ թռչունների քանակի, աճեցված ճտե-  
քի և մսի աճի համար:

7. Անասնապահության մեջ ստեղծել մշտական բրիգադներ, անասնապահների լավագույն խնամքն ու պահպանումն ապահովելու ընդունակ կոլտնտեսականներին: Այդ բրիգադներին հատկացվում է անասունների մշտական կազմ՝ ամբողջ տարվա ընթացքում սպասարկելու համար:

8. Բրիգադի կոլտնտեսականների միջև աշխատանքը բաշխվում է աշխատանք, վոր, որինակ, կաթնատնտեսական ֆերմայում կաթնատնտեսականների կթումն ու կերակրումը կատարի միևնույն կոլտնտեսականը՝ այդ աշխատանքը չբաժանելով ղանաղան կոլտնտեսականներին միջև:

Կերը, ջուրը կրելու, աղբը դուրս տանելու, գիշերներն անասուններին հսկելու համար անասնապահական բրիգադում նշանակվում են առանձին կոլտնտեսականներ:

Արտադրական առաջադրանքները բարձրացվելու դեպքում (տե՛ս ավելացման, քաշի, կաթի ավելացման և այլն) անասնապահական ֆերմաներում աշխույժ գնահատությունն ավելացվում է, իջեցման դեպքում՝ համապատասխան չափով պակասեցվում:

9. Կոլտնտեսությունը կոլտնտեսությունների վարչություններին և կոլտնտնություններին նախադրույալներում է գործառնարձի բարձր ձևերի կիրառվումից, վորոնք անհասկանալի չեն իրենց իսկ կոլտնտեսականներին և այս առթիվ վորոշում է:

ա) վերացնել Հյուս. Կովկաս, Հար. Վորդայի, Միջին Վորդայի յերկրային կոլտնտնությունների վորոշումները կոլտնտեսություններում աշխատելու կոչված՝ պրոդուկտի գործառնարձ մասին, վորը դեռևս չի ստեղծված կոլտնտեսությունների մասնաշաղկան վորոշով բարդացնում է կոլտնտեսականների աշխատանքի հաշվառումը և հանգում է աշխույժի չափերին:

բ) վճռականապես արդելել կոլտնտեսականների աշխատանքի հաշվառումն ու գնահատումը կատարել աշխատած ժամանակի քանակով (որերով, ժամերով) և վոր թե կատարված աշխատանքի քանակով ու վորակով:

### ԱՐՏԱԴՐԱՆԻ ՆՈՐՄԱՆԵՐ

1. ԽՍՀՄ և ՌՍՖՍՀ Կոլտնտնությունն առաջարկում է յուրաքանչյուր կոլտնտնության մեջ արտադրանքի նորմաներ սահմանելու նկատի ունենալ դարձանային և այլ դաշտային աշխատանքների կատարման ամենակարճ ժամանակամիջոցը:

2. 1932 թ. արտադրանքի նորմաների հիմք ընդունել լավագույն կոլտնտեսականների, կոլտնտեսական լավագույն բրիգադների աշխատանքի փորձը, հաշվի առնել կոլտնտեսական արտադրության ընդարձակվող մեխանիզացիան և կոլեկտիվ աշխատանքի կադավերայման մեջ կոլտնտեսությունների ու բրիգադների ձևը բերած վարժությունները:

3. Արտադրանքի նորմաներ մշակում է կոլտնտեսություն վարչությունը այս աշխատանքին ներդրավելով լավագույն կոլտնտեսականներին, առանձնապես հարվածայիններին, սոցմրցակցողներին և աղբոր կադմին:

Մշակված նորմաները պարտադիր կերպով քննարկվում են արտադրական խորհրդակցություններում բրիգադ առ դրիգադ և հաստատվում կոլտնտեսականների ընդհանուր ժողովում:

4. Աշխատանքների նորմավորման պրակտիկայում արտադրանքի նորմաներ սահմանելիս մինչև այժմ չի վերացված յերկու վնասակար ծայրահեղություն:

ա) արտադրանքի ակնհայտ ցածր նորմաներ սահմանելը, վորոնք ձգձուղում են աշխատանքի ժամկետները, ավելորդ քանվորական ուժ են կանգնեցնում կոլտնտեսություններում, արժեքադրկում են աշխույժ և քայքայում կոլտնտնության ու իրենց իսկ կոլտնտեսականների նյութական դրությունը:

բ) արտադրանքի ակնհայտ բարձր նորմաներ սահմանելը, վորոնք անիրագործելի չեն նույնիսկ բարեխղճորեն աշխատելիս, վորոնք տանում են դեպի աշխատանքի վորակի խախտումը, կոլտնտեսականների աշխատանքի հաշվառման խախտումը և հանգում արտադրական առաջադրանքների չկատարման:

Այս յերկու ծայրահեղությունների դեմ էլ անհրաժեշտ է վճռական պայքար մղել, ուշի ուշով մշակելով արտադրանքի նորմաները համաձայն յուրաքանչյուր կոլտնտնության պայմանների և աշխատանքի ամեն մի տեսակի:

5. Աշխատանքի համամիութենական խորհրդակցության մշակած արտադրանքի նորմաները կոլտնտնությունը հաստատում է, իբրև որինակի նորմաներ: Ղեկավարելով դրանցով, իբրև ոժանդակ նյութով, յուրաքանչյուր չրջան և կոլտնտնություն պետք է մշակի իր արտադրանքի նորմաները՝ յերկնելով տեղական պայմաններին:

### ԱՇԽԱՏԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽՈՐԵՐՈՎ

1. Կոլտնտնությունն առաջարկում է կոլտնտեսականների աշխատանքի գնահատումը կատարել աշխույժով և նախադրույալներում է կոլտնտեսականների աշխատանքը դրամով վարձատրելու վորձերից:

2. Աշխույժի կրճատման և չափման դեմ պայքարելու նպատակով սահմանել հետևյալը:

ա) կոլտնտնության վարչությունը, յուրաքանչյուր բրիգադի համար, արտադրական առաջադրանքի, նրա կատարման ժամկետների և վորակի հետ միասին սահմանում է աշխույժի այն քանակը, վորից ավելի բրիգադիբը աշխույժը գործադրել չի կարող ամբողջ բրիգադի կատարած աշխատանքի համար:

բ) սահմանել, իբրև հաստատուն կանոն, վոր սպասարկվող անձնակազմը (պահակներ, հավաքարարուհիներ, վարչության կից չրջագայողներ) չի կարող ավելի աշխույժ ունենալ, քան արտադրության մասնակցող բարեխղճ կոլտնտեսականի ստացածն աշխույժի յերեք քառորդ մասը:

գ) սահմանել, վոր սպասարկող վարչատնտեսական անձնակազմի աշխույժի քանակը և այդ կատեգորիաների աշխույժով հասնող յեկամոր ընդհանուր դումարը ավելի չպետք է լինեն խոշոր կոլտնտնությունների համախառն յեկամոր 1½-2 տոկոսից, իսկ մանր կոլտնտնությունների՝ 2-3 տոկոսից:

3. Սահմանել աշխատանքի հետեյալ 5 տեսակները, նրա բարդութեան դժվարութեան և վորակի համապատասխան.

ա) Թեքիվ աշխատանքներ.— Գնահատումը՝ 50 հարյուրերորդական աշխուր արտադրանքի նորմայի համար. ձիավորները, խոտը չըջնելը, աղբ տանելը, նույնպէս և սերմացու կրելը առանց բեռնելու և թափելու, ծղոտը սայլով կրելը՝ ծեծելու, սերմնացանի ոգնակները.

բ) միջակ աշխատանքներ.— Գնահատումը՝ 75 հարյուրերորդական աշխուր արտադրանքի նորմայի համար, կարտոֆիլ տնկելը ակոսում, փորված կարտոֆիլը հալաքելը, արմատապտուղները ջրկելը պահելու համար, ձիու փողխերով փողխելը, սիլոսային զանգվածի տրորելը, խուրճեր կրելը և բարթոց դնելը, ափսեյալոր փողխով փողխելը, բանջարեղեն հալաքելն ու տեսակավորելը.

գ) ծանր աշխատանքներ (հասարակ).— Մեկ աշխուր արտադրանքի նորմային՝ արմատապտուղների փորումը, նոսրացումը, քաղհանը, փխրեցումը, բուկ տալը, սածիլների հանելն ու տնկելը, մեքենայից հետո խուրճեր կրելը, կարտոֆիլի փորումը գութաններով, արմատապտուղների, ձակնդեղի, կարտոֆիլի փորումը և այլն, միջլարքերի հերկելը, կուլտիվատորով աշխատելը, բամբակի չանաքը, ծխախոտի կտրելը և թելի վրա չարելը, դեղ դնելը, հերկելը, սերմերի զտումը մեքենաներով, հորթարածներ, մատղաշ անասուն խնամողները, կաթի չըջանից հետո, անասնապահները, վորոնք անասունների կերակրման և խնամելու պարտականութիւնն չունեն, ճաղարաբուծները և ձիապահները:

դ) հատուկ փորձառութեամբ պահանջող և ծանր աշխատանքներ.— Գնահատումը՝ 1,25 հարյուրերորդական աշխուր արտադրանքի նորմայի համար արմատներ պոկելը, առու վորելը, կտվատի և կանեփի գդելը, չիկելը և թրջելը, սիլոս կտրելը, հյուսներ, վառարանագործներ, ձեռքով ցանք անողներ, անասնաբուժ. սանիտարներ, կթիչ անասնապահներ, հորթապահուհիներ, վորոնք խնամում են ծծկեր չըջանի մատղ անասուններ, խողարածները, թռչնապահները.

յե) վարակցալ աշխատանքներ.— Գնահատութիւնը՝ 1,50 հարյուրերորդական աշխուր արտադրանքի նորմայի համար. բրիգադիր, տրակտորիստ, մեքենավար, դարբին, փականագործ, ալգեգործ, բանջարաւոր, կալսիչ մեքենայի մեջ խուրճ գցող (բարաբանի վրա աշխատող), անասնաբուժ.— տեխնիկ, հատուկ կրթութիւնն ունեցող անասնաբուժական սանիտարը:

Անասնաբուժական ֆերմաների վարիչներին համապատասխան կուլտիւնութիւնների վարչութեան անդամների աշխատավարձին՝ թեկուզ նրանք վարչութեան անդամներ չլինեն:

4. Աշխատանքներն որակելի ձևով ըստ տեսակների հանձնարարութեամբ բաշխման հիման վրա յուրաքանչյուր կուլտիւնութիւնն վոչ ուշ, քան մարտի 1-ը պարտավոր ե վերաքննել իր սահմանած աշխատանքի գնահատումն ու նրանց բաշխումն ըստ տեսակների և սահմանել իր տնտեսութեան պայմաններին համապատասխանող նոր գնահատութիւնն ու բաշխում:

1. ԽՍՀՄ Հողթողկոմատի և ԽՍՀՄ և ՌՍՖՍՀ Կուլտիւնութեան նախարարութեան աշխատանքի հաշվառումը 1931 թ. համար՝ կուլտիւնականների ձեռքը տալով աշխուրքուկները և կատարած աշխուրերը բրիգադների միջոցով վոչ պակաս, քան 5 որը մեկ անգամ գրանցելով՝ ամբողջովին արդարացրեց իրեն:

2. Կուլտիւնութեան վարչութիւնն առաջարկում ե բաւոր կուլտիւնութիւնների և կուլտիւնութիւններին 1932 թ. հաշվառման կէլառման պրակտիկայում ղեկավարվել հետեյալով.

ա) անպայման հաշիւ առնել յուրաքանչյուր կուլտիւնականի աշխատանքի քանակն ու վորակը անմիջականորեն բրիգադիրի ձեռքով.

բ) դաշտում կատարած աշխատանքի հաշվառումը պետք ե կատարվի ամեն որ, իսկ աշխուրերի դրացումն աշխուրքուկում վոչ պակաս, քան հինգ որը մեկ անգամ.

դ) անասնապահութեան մեջ կուլտիւնականների աշխատանքի հաշվառումը կատարվում ե ամիսը մեկ անգամ՝ համաձայն օտաջված աճի և մացու անասունների ու մատղաշ անասունների քաշի ավելացման:

Կաթնատնտեսական ֆերմաներում կթիչների աշխուրերի դրանցումը կատարվում ե ամեն որ՝ յեղնելով կթված կաթի քանակից:

3. Պարտավորեցնել կուլտիւնութեան վարչութեան այն անդամին, վորը վարում ե աշխատանքի կազմակերպումը կուլտիւնութեան մեջ, և հաշվետարին նրանց անձնական պատասխանատվութեամբ ամեն աճիս վոչ ուշ, քան հաջորդ ամսվա 5-ը հաշիւ կուլտիւնականների կատարած աշխուրերի ընդհանուր քանակը և գրանցել աշխուրերի հաշվառման հատուկ դրբում:

4. Պարտավորեցնել հանրապետական, յերկրային, մարդային, կուլտիւնութիւններին դարնանացանի առթիւ ավարտել հաշվական աշխատողների պատրաստումն ու ավարտումը վոչ ուշ քան դարնանացանը սկսելուց 10 որ առաջ:

5. Պարտավորեցնել հանրապետական, յերկրային, մարդային կուլտիւնութիւնների վարչութեան նախագահներին իրենց անմիջական ղեկավարութեան տակ առնել կուլտիւնութիւնների մատակարարումն աշխատանքային գրքուկներով, կուլտիւնականների աշխատանքի հաշվառման ձեռքով ու բլանկներով և ամենակարճ ժամանակամիջոցում աշխուրքուկները հանձնել կուլտիւնականների ձեռքը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ, ՊԱՅՔԱՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՅԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Բրիգադի ներսում ագրո-գոտտեխնիկական ձեռնարկումների կիրակրման աշխատանքի վորակի համար պատասխանատվութիւն կրում ե բրիգադիրն անձնապէս:

2. Բրիգադների աշխատանքի վերահսկողութիւնն ու օտադումը կատարում են կուլտիւնութեան վարչութեան անդամները արտադրա-

կան առաջադրանքների անմիջական կատարման ընթացքում (ցանց, միջնաբերդի մշակում, բերքահավաք, բեղմնավորման կամ պահպանման, կոմբիների և խոզերի ծնում), վորի համար վարչութիւնն ամեն մի անդամ պետք է ամրացնէ լինի վորոշ թվով բրիգադների:

Գանձը վերջնապէս և ծրարը յերեւելուց հետո կատարված աշխատանքը թէ ըստ քանակի և թէ առանձնապէս ըստ վորակի բրիգադներին և բրիգադիւններին ընդունելու համար լավագոյն կոլտնտեսականներին և կոլտնտեսական վարչութիւնն անդամներին կազմվում են վերահսկիչ-ստուգիչ հանձնաժողովներ, վորոնք հենց աշխատանքի վայրում վորոշում են թէ՛

ա) արդյոք ցանկած տարածութիւնն չափը համապատասխանում է բրիգադի ներկայացրած տվյալներին:

բ) արդյոք աշխատանքի վորակը, ագրո-դոտեխնիկական կանոնները համապատասխանում են այն առաջադրանքներին, վոր տվել է կոլտնտեսութիւնն վարչութիւնը:

գ) արդյոք բրիգադիւնի հսկման աշխուրհի քանակը համապատասխանում է կոլտնտեսութիւնն վարչութիւնն ստուգիչ առաջադրանքներին:

Վերահսկիչ-ստուգիչ հանձնաժողովներն իրենց ստուգումից հետո կազմում են գրաւոր ակտ և իրենց ստորագրութեամբ հանձնում կոլտնտեսութիւնն վարչութիւնն:

3. Լավագոյն կոլտնտեսականներին, բրիգադիւններին, Ֆերմանեքի վարիչներին խրախուսելու համար, վորոնք տալիս են ավելի բարձր վորակի աշխատանք, բացի հավելյալ աշխուրհի տալուց, յուրաքանչյուր կոլտնտեսութիւնն մեջ՝ նայած նրա տնտեսական կարողութիւնն աստիճանին՝ ստեղծել հատուկ պարգևատրման ֆոնդեր, վորոնք անմիջապէս հանձնել կոլտնտեսականներին աշխատանքի բարձր վորակի հաստատելուց հետո:



ԽՍՀՄ և ՌՍՖՍՀ Կոլտնտեսութեան վարչութիւնը յերկրային, մարդային, շրջանային կոլտնտեսութիւններին և (կոլտնտեսութիւնն վարչութիւններին պարտավորեցնում է առաջիկա դարնանացանի կամ պահանջին լայն մասսայական պարզաբանման աշխատանք կատարել կոլտնտեսականների մեջ արտադրական առաջադրանքների կատարման ջուրը, այդ կամպանիայի հիմքը դարձնելով Համ. Կ. (բ) ԿԿԿ փետրվարի 4-ին հրապարակած վորոշումը «կոլտնտեսութիւններին կազմակերպական տնտեսական ամրացման հերթական միջոցառումների մասին», 17-րդ կուսկոնֆերանսի վորոշումը, ԽՍՀՄ Հոգեփողկոմատի վորոշումը ցանքաշրջանառութիւնն մտցնելու, նորոգումը կազմակերպելու, սերմացու հավաքելու և դարնան նախապատրաստվելու մասին և այդ վորոշումներին ինչպէս և ԽՍՀՄ Կոլտնտեսութեան ներկա վորոշման ուսումնասիրումը կոլտնտեսականների լայն ժողովներում:

Կոլտնտեսութիւնները կազմակերպութեան և տնտեսապէս ամրացնելու խնդիրը հրամայաբար պահանջում է կոլտնտեսական կազմակերպութիւններին ստեղծել և դաստիարակել կոլտնտեսական ակադեմիկոսներին կոլտնտեսականներին, վորոնք պետք է հանդիսանան «հե-

նարան կարեւորագոյն տնտեսական ձեռնարկումներ կիրառելիս, ինչպէս՝ պայքար բերել համար, հացամթերումների պլանի կատարման համար այլ կոլտնտեսականներին սոցիալիստական վերադաստիարակութիւնն դործում»:

Կոլտնտեսութեան վարչութիւնը պարտավորեցնում է հանրապետական, յերկրային, մարդային և շրջանային կոլտնտեսութիւններին և կոլտնտեսական վարչութիւններին սիստեմատիկ աշխատանք կատարել առաջ քաշելու և ստեղծելու կոլտնտեսական ակադեմիկոսներին հաշվի առնելով լավագոյն կոլտնտեսական հարվածայիններին, բրիգադիւններին, նրանց կոնֆերանսներ, խորհրդակցութիւններ դուրս բերելով, նրանց ուղարկելով վորակավորման կուրսեր և առանձնապէս ակադեմիկոսներ չափով առաջադրելով կին կոլտնտեսականներին արտադրական և ղեկավար աշխատանքի:

Թեւակոխելով նոր տնտեսական տարին, ղինվելով նոր մեքենա-կան տեխնիկայով (1.700 ՄՏԿ) և 5-ամյակը 4 տարում կատարելու պայքարի միջոցին վիթխարի չափերով կուտակված փորձով, կոլտնտեսութիւնները պետք է ցուցաբերեն կուլիտիւլ աշխատանքի բարձր արտադրողականութիւն, աշխատանքի բարձր վորակի և ապրանքաշուկային, բերքատվութիւնն բարձրացման, միջոցների ամենախիստ խնայողութիւնն նոր բարձր մուշներ՝ հիմք ունենալով սոցիալականութիւնն և հարվածայնութիւնն լայն ծախսումը, կոլտնտեսական մասնակցների ակտիւլութիւնն և ինքնագործունեյութան բարձրացումը, վճռական պայքարն ընդդէմ այդ ինքնագործունեյութիւնը մերկ վարչարարութեամբ փոխարինելու, առանձնապէս պայքարն ընդդէմ կուլիտիւլային մանցորդներին, կոլտնտեսութիւններին մեջ՝ ոպորտունիստական իդեոլոգիա և պրակտիկա փոխադրելու, կոլտնտեսականներին ամբողջ մասսայի կուլտուր-բաղադրական դիտակցութիւնը վերափոխելով և դարձնելով սոցիալիզմի իսկական կառուցողներ:

ԽՍՀՄ և ՌՍՖՍՀ Կոլտնտեսութեան Ն. ՏԱՏԱՅԵՎ

ԱՆԴՐԿՈՒՄՆԵՏԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1932 թ. մարտի 1-ին

Ի կատարումն ՀամԿ(բ)ԿԿԿ 1932 թ. փետրվարի 4-ի վորոշման «կոլտնտեսութիւնները կազմակերպութեան տնտեսապէս ամրացնելու հերթական միջոցառումներին մասին և ԽՍՀՄ ու ՌՍՖՍՀ ԿՏԿ 1932 թ. փետրվարի 8-ի վորոշման՝ «Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսութիւններում», Անդրկոլտնտեսութեան վարչութիւնն առաջարկում է ԱՍՖՖՀ կոլտնտեսական սիստեմին աշխատանքի կազմակերպման հիմք դարձնելով հիշատակված վորոշումները, ղեկավարվել նույնպէս հետեյալով.

1. Բրիգադների մասին

ա) բրիգադների առանձին անդամների մասնագիտացման և նրանց ղեկավարումը բարելավելու նպատակով նպատակահարմար դասեր բրիգադները բաժանելու առանձին արտադրական խմբակներին (ոգակներին)՝ վարողների, ցանողների, փոխողների խմբակներ, առանձին

անհավերժ անասուններ (վոլխար, խոզ և այլն) սպասարկողներին խմբակներ, թթենու տերև հավաքողների, գրենա արթնացնողների խմբակներ և այլն:

բ) արտադրական հողամասին ամրացվող բրիգադի քանակական հաշվը սահմանել՝ տեխնիկական կուլտուրաների մոտավորապես 30, 35 հոգի, սլոպատու տնկիներին և խաղողի այգիներին՝ մոտավորապես 20—25 հոգի, նայած հատկացված հողամասի չափին ու տեղին արտադրական նուազըրության բնույթին, կոլտնտեսության, ՄՏԿ սպասարկման, մեխանիզացիայի աստիճանին և այլն:

գ) անասնապահության մեջ խոշոր յեղջյուրավոր անասունների համար արոտի շրջանում բրիգադներ կազմակերպել մոտավորապես 10—15 հոգուց, դոմձ կապելու շրջանում՝ 15—20 հոգուց, մանր յեղջյուրավոր անասունների համար՝ 10—15 հոգուց, (անասունների հասարակների քանակի, անասունների քանակի և սպասարկման մեխանիզացիայի համապատասխան):

## 2. Բրիգադիւրների մասին

ա) բրիգադիւրներին, իբրև կանոն, անմիջական աշխատանքից չեն ազատվում: Կոլտնտեսություններում դրանց ազատումը, իբրև բացառություն, թույլատրվում է միայն կոլտնտեսականների ընդհանուր ժողովի համապատասխան վորոշմամբ:

## 3. Գործավարձի մասին

ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝ աշխատանքի դնահատությունը կատարել:

ա) հողի հարթումը (արմատներ հանելը, քարեր հավաքելը և այլն) — հեկտարով՝ պահպանելով կատարյալ մաքրություն և փոսերի հարթություն:

բ) պարարտացումը՝ հեկտարով՝ պահպանելով պարարտանյութի հավասարաչափ բաշխումը և կանոնավոր ծածկումը:

գ) ջրումը՝ հեկտարով՝ պահպանելով ջրելու նորմաները, ժամկետները, համաչափությունը և ջրի խնայողարար ծախսումը:

դ) մշակումը՝ հեկտարով (քաղհան, կուլտիվացիա և նոսրացում) պահպանելով քաղհանած մոլխոտների հավաքումը դաշտից, բույսերին չվնասելը և նոսրացնելիս բույսերի միջև սահմանված թաքածություն թողնելը:

ՍԱԾԻԼԱՎՈՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ փոսերի փորումը բույսերի քանակով՝ պահպանելով սահմանված խորությունը, լայնությունը, յերկարությունը, անկյունների ուղղադժությունը և պատերի հարթությունը:

ՋԵՐՄՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ՝ ա) ջերմոցներ պատրաստելը և աղբը հարթելը՝ փոսերի քանակով՝ պահպանելով հարթելու ամբողջություն ու համաչափությունը և ջերմոցային տնտեսության բոլոր կանոնները, յուրաքանչյուր կուլտուրայի համար առանձին (բամբակ, ծխախոտ, բանջարեղեն և այլն):

բ) ջերմոցային տնտեսության բոլոր աշխատանքները՝ շրջանակներով՝ պահպանելով բոլոր ազդոնմիական պահանջները:

ՍԱԾԻԼԱՎՈՐ ԲԱՄԲԱԿԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ՝ ա) բամբակների պատրաստումը, նրանց լցնելը և ջերմոցներում դնելը՝ բամբակների քանակով՝ պահպանելով լցնելու խտությունը և կանոնավոր դրումը ջերմոցներում:

ԾԱՌԱՅՈՒՅՈՒՄՆԵՐ՝ Կնահատությունը պետք է կատարվի տողից սածիլ տված բամբակների քանակով:

ԲԱՄԲԱԿ՝ ա) սերմերի դրումը դարաչիզիթից և այլ խառնուրդից՝ զտված խառնուրդի և ցանելիք սերմի քաշով:

բ) սերմերի թրջելը՝ քաշով՝ խուսափելով չափից ավելի պահելուց, ծելուց և փոխուց:

գ) բերքահավաքը՝ քաշով (կիլոգր) պահպանելով հավաքման ժամանակը, մաքրությունը (չթափելը և թփի վրա չթողնելը), հում բամբակի սահմանված քանակի պահպանումը (հողակոշտեր, տերևներ և այլ խառնուրդ չլինելը), հում բամբակի հասած լինելը և չորությունը:

ԾԱՌԱՅՈՒՄՆԵՐ (ՍԱԾԻԼԱՅՄԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ) ա) ծխախոտային աշխատանքները՝ մինչև բերքահավաքը հաշվվում են հեկտարով:

բ) հավաքումը՝ թեկերի քանակով՝ պահպանելով ըստ շարքերի հավաքումը, հաշվի առնելով տեխնիկական հասունությունը, տերևի մնացած լինելը:

գ) ծխախոտի թառամեցումն ու չարումը՝ թեկերի քանակով՝ մեկ թեկի վրա մեկ բերքի մեկ տեսակ ծխախոտի չարումը՝ թույլ չտալով չարել հիվանդ և մեխանիկորեն վնասված տերևներ և ծխախոտը թառամեցնելիս չափից ավել տուքացում և փոսեցում:

դ) չորացումը, չորանոցի թեկերով շրջանակների ժամանակին ներս տանելն ու դուրս հանելը: Նորման սահմանվում է շրջանակների քանակով՝ պահպանելով սահմանված ջերմություն, ծխախոտի չորանոցների շրջանակների լրիվ բեռնվածություն նրանց տարողության համապատասխան, ծխախոտի կապելն ու փաթեթելը՝ քաշով՝ պահպանելով, վոր կապը պարունակի մեկ բերքի միատեսակ, վոր հիվանդ և մեխանիկորեն չվնասված տերևներ՝ պահպանելով ստանդարտ ձևեր (միաչափ քաշ և մեծություն):

## ԲԱՉՄԱՄՅԱ ՏՆԿԻՆԵՐ

ԹԵՑ՝ ա) հողամասի արմատների հանելն ու մաքրելը՝ մանր ծառերի և թփերի համար՝ քառ. մետրով, խոշոր ծառերի համար՝ կոճղեղով, խնամքով փորելով բոլոր արմատները հողից և առաջացած փոսերը լցնելով:

բ) հողամասի սահմանադժումը՝ հեկտարով՝ պահպանելով խրամի տեղադրի բոլոր կանոնները:

գ) խրամներ պատրաստելը՝ դժային (ПОГОННЫЙ) մետրով՝ պահպանելով պատշաճ խորություն և կարգ հողաչեքները կուտակելիս:

դ) խրամի լցումը՝ դժային մետրով՝ պահպանելով ամբողջ հողաչեքում լցնելու հաջորդականություն և խնամք:

յ) ցանքը՝ հեկտարով՝ պահպանելով սահմանված տարածությունը շարքերի մեջ և նրանց միջև և սերմերը ծածկելու պատշաճ խորությունը, ինչպես և փոսիկների պատրաստումը:

17

յին Ֆերմաներում, հիմք դարձնելով լավագույն կոլտնտեսականների արտադրանքը:

## 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԱՇԽՈՐԵՐՈՎ

ԽՍՀՄ և ՌՍՖՍՀ Կոլտնտեսությունի վորոշման մեջ թվարկված աշխատանքներին և նրանց աշխորերով դնահատմանն ալեկացնել հետեվալը:

ա) Թեթև աշխատանքներ.— դնահատություն՝ 50 հարյուրերորդական աշխորը արտադրանքի նորմայի համար: Բամբակի սերմի դուռմը ձեռքով, խաղող հավաքելը (առանց տեղ հասցնելու), արքադ հավաքելը, ցերեկվա պահակների աշխատանքը, սայլով և ձեռքով ջուր կրելը, թթենու տերեվ հավաքելը և այլն:

բ) Աիջակ աշխատանքներ.— դնահատություն՝ 25 հարյուրերորդական աշխորը արտադրանքի նորմայի համար: Խիսեյալոր փոցխով փոցխելը, գիւղավորումը սերմերի ախտահանումը, ցանքը պարարտացնելը, բերքահավաքից հետո բամբակի և ծխախոտի ցողունները հավաքելը, սածիլների պատրաստումը, բաժակների պատրաստումը, բամբակի սածիլավոր կուլուրայի համար, պտղատու այգիների մաքրումը արմատներին և քներին չաղալի քսելը, թեյ կտրելը, գիւղերային պահակների աշխատանքը ֆերմաներում:

գ) Ծանր աշխատանքներ (հասարակ).— մեկ աշխորը արտադրանքի նորմայի համար: Ծխախոտի և թեյի տնկումը և կրկնատնկումը, բանջարեղենի հավաքումը և տեսակավորումը, հողամասի ջրելն ու արմատներին մաքրելը, խրամներ փորելը, թեյ հավաքելը, խողովի աքգին թաղելը, պտղաբեր այգիների փորումը և պտղատու ծառերի չուրջը փորումը, կթիչների, ձիապանի, հովվի ողնականի, գիւղերային պահակների, մատղաշ անասունների հովվի, թռչնապահների և խողապահների աշխատանքը և այլն:

դ) Խառակ փարձառություն պահանջող և ծանր աշխատանքներ.— դնահատություն՝ 1,25 աշխորը արտադրանքի նորմայի համար: Բաղմամայ տնկիների համար տեղ նախապատրաստելը, խողովի ետը, պլումազա տնկիների համար տեղ նախապատրաստելը, պտղատու ծառերի նոսրացուղատու և խաղողի այգիների բուժումը, պտղատու ծառերի նոսրացումը, թեյի մատղաշ թփերի ձեւավորումը, թմբուկին խուրձ հասցնելը, փոխ կտրելը, տարիքավոր անասունների հովվի, չորանները, ավագ անասնապահները, ինկուբացիան, արհեստական սերմավորման աշխատանքը և այլն:

ե) Վարակյայ աշխատանքներ.— դնահատումը՝ 1.50 հարյուրերորդական աշխոր արտադրանքի նորմայի համար: պտղատու ծառերի և խաղողի վաղի պատվաստումը, հյուսնների, մեղվաբուծների աշխատանքը և այլն:

## 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

ա) Այն բրիգադներում, վորտեղ բաղիգադները կիսադրաղետ լինելու պատճառով չեն կարող ինքնուրույն կատարել աշխատանքի հաշվառումը, նրանց ոգնելու համար գրադետ կոլտնտեսականներից նշաղակել հատուկ հաշվիչներ, վորոնց հանձնարարել հաշվառման տեխնի-

կական աշխատանքը: Բրիգադներից պատասխանատվությունը հետաղիւրցնելով աշխատանքի գրադետ համար:

բ) Բրիգադների տեխնիկական անդրադիտության վերացման համար անհրաժեշտ համարել, իբրի կարեւորագույն ձեռնարկումներից մեկը՝ բայնսրեն պրակտիկ կերպով ցուցադրել աշխորերի տեխնիկական դրոնցումը անվանական թվարկման և կոլտնտեսականների աշխորքույկներին մեղ հրաշխիւրով միմյանց մոտ դանվող կոլտնտեսական խմբակների բրիգադիւրների և հաշվիչներին պարբերական դուրնթացներ, դրանց ղեկավարման համար ներդրակելով չրջկոլտնտմիության, ՄՏԿ, չրջհողաթիւններ և չրջանային այլ կազմակերպությունների աշխատողներին:

գ) անմիջական արտադրական աշխատանքից չաղատված բրիգադիւրներին աշխատանքի ժամանակին և կանոնավոր հաշվառման համար նշանակել որական 10-15 հարյուրերորդական աշխոր:

դ) գյուղատնտեսական առանձին ժամանակաշրջանների (դարնանացան, մշակում, բերքահավաք և այլն) աշխատանքից առաղ Շրքի կոլտնտմիությունը, ՄՏԿ-ները կոլտնտեսական վարչությունները սիտամատիկ կերպով պետք և ստուգեն կոլտնտեսությունների և կոլտնտեսականների վաստորեն աղահաղված լինելը նարյաղներով, աշխորքույկներով և աշխատանքի հաշվառման այլ ձեւերով, միջոցներ ձեռք առնելով ժամանակին մատակարարելու նրանց հիշատակված ձեւեր:

## 7. ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մատնանչելով, վոր կոլտնտեսություններում գեռու կազմակերպված արտադնացությունն ընթանում և անթաղաբար, վորտեղ հետե կոլտնտեսությունների մեծ մասը պոյմանաղբը չի կնքել ձեռնարկություններին և խորհանտեսություններին հետ, մի շարք չրջաններում չի կատարում պայմանաղբերով նախատեսված արտադրությունները (փայտամթերումներ, նոր կառուցումներ, արանսպորտ և այլն), լիւնելով դրանից, չրջկոլտնտմիությունները և կոլտնտեսական վարչությունները պետք և աղահաղվեն հետեյաղ պրակտիկ ձեռնարկումների կերպումը:

ա) արտադրական և աշխատանքային պլաններ կազմելիս, ինչպես և արտադրանքի նորմաներ սահմանելիս, կոլտնտեսություններում լիւլակեա ունենաղ բանվորական ուժը և արտադրության միջոցներն առաղվելադույն չաղով աղատելու անհրաժեշտությունը արտադնացության և կնքված պայմանաղբերին լրիվ կատարումն աղահաղելու համար:

բ) վոր ուղ, քան 1932 թ. աղբիլի 1-ը բոլոր չրջկոլտնտմիություններին կից կազմել կոլտնտեսությունների աշխատանքի հաղադական հաղվեղիւրը, դրա հետ միասին աշխատանք ծաղաղելով պայմանաղբեր կնքելու տնտեսական մաղմիւրներին հետ:

գ) կոլտնտեսության վարչություններին արղելը կոլտնտեսականներին հետ կանչելը ձեռնարկություններին և խորհանտեսություններին աշխատանքից, միւլե պայմանաղբով նախատեսված վարձման ժամկետների լրացումը:

դ) Համ կ(բ)կկ և ԲԴՏ Ժողկոմատի վարչաղմների համաղաղաղաղան չրջկոլտնտմիություններին կից նշանակել արտադնացության տեսուղ

Այս խնդիրներն պրակտիկ կենսագործումը, պետք է կատարվի լայնորեն մտքի լեզացիայի յենթարկելով կոլոնտեսական մասսաների ստեղծարար խանդավառությունն ու ակտիվությունը, ստեղծելով և զատիարակելով կոլոնտեսական ակտիվ հարվածային կոլտնտեսականներին՝ վճռականորեն պաշարելու աջ ուղորտունիքով՝ ավյալ շրջանի գլխավոր վտանգի և «ձախակախ» ցատկումների դեմ, ընդդեմ դործա-վարձը՝ որավարձով, ժամանակավարձով փոխարինելու կոլակային հավասարանքի— աշխատանքի հաշվառման և յեկամուսաների բաշխման մեջ, հողուտ դիմադրելության վերացման, հողուտ բրդաղաների ճիշտ կազմակերպման, հողուտ աշխատանքի բարձր արտադրողականու-թյան, հողուտ բարձր բերքատվության և կոլտնտեսական տնտեսու-թյան տարտնջայնության, հողուտ հնդամյակի 4-րդ ավարտական տարվա խնդիրներն ըստ յեկական կատարման:

ԱՅՏԻՐԻՍՏՆԻՔԻ ՆԱԽԱԳԻՏՈՒՄՈՒՆԻ ԱՎԻՍ



ԳԻՐԸ 15 ԿՈՊ. (1 1/4 ժ.)



ОБ ОРГАНИЗАЦИИ ТРУДА В КОЛХОЗАХ

Госиздат ССР Армении  
Эривань - 1932

ՀՀ Ազգային գրադարան



NL0217067

30. 530